

ԳՈՒՐԳԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՆԻԾՎԱԾԸ

I

Այդ օրը կարծես թե արփին
տարերքի մեջ էր հրեղեն:
Բոցեղեն խնջույք էր անում
և ցնծում, երգում էր արփին:
Թվում էր՝ լեռան թիկունքից
ժայթքել է հրաբուխ կրկին:
Ժայթքել է հրաբուխ կրկին,
հորդում է զինի հրածին:

Հորդում էր նաև պալատում
այդ օրը զինին ոսկեհուր,
Եվ ամեն գավի հայելում
տեսնում էր Թութմոսը նրան...
Տեսնում էր մշուշում զինու
և զգում, որ մի դիվածին,
Խանդի պես մտնում է հոգին...

Եվ հազար արեգակ կարծես
այրում էր սիրտը Թութմոսի:
Հազար սամում էր կարծես
մուլեգնում սրտում Թութմոսի:
Այդ օրը լինե՞ր հազար սիրտ,
կճաքեր կրծքում Թութմոսի:

* * *

Թութմոսի հայրը՝ նախկին փարավոն,
նրա մայրը՝ հարճ,
և քուրմ էր ինքը:
Թութմոսը դիրքում էր համեստ,
իսկ սիրած դիցուհին նրա...
Բոլորը գիտեին, այո՛,
որ նա էլ ծնունդ է մարդու,
որ հայրը նրա՝ նույնպես փարավոն,
որ հողեղեն է և մահկանացու....
Բոլորը գիտեին հաստատ
չէին հավատում սակայն...

Եվ ասում էին, թե իրականում
աստված է նրա հայրը հարազատ,
արևի աստված:

* * *

Երբ տեսավ մի օր աչքերով մի այլ
Թութմոսը հասուն դստերն արևի,
մշուշը պատեց հայացքը մի պահ,
լուսեղեն մի ամպ
կարծես շղարշեց պատկերն այդ չքնաղ,
կապույտ երկնքից նա թվաց իջած:
Ապա, երբ ցրվեց մշուշ-պատրանքը,

կարծեց՝ տեսածը լուսե երազը էր:

* * *

Ո՞վ կհավատար հրաշքին նման...
Եվ ասում էին, թե իրականում
աստված է նրա հայրը հարազատ:

Ո՞վ կդիմանար հրաշքին նման...
Եվ նրան տեսնող ամեն արարած
դառնում էր մեկեն
մի խենթ սիրահար:

* * *

Թութմոսի սրտում՝ խելա՛ռ, սիրագար,
Հազար սամում էր այդ օրը ռոճում:

Այդ օրը կրկին
Արփին հարսանիքն իր դասեր հիշում
Ու տարեդարձն էր հերթական նշում...

Դստե՛ր, որ կին էր դեռ մանուկ օրից...
Կին՝ փարավոնի:

...Ու խանդոտ քուրմը
Օրն այդ տարփալի
«Տեսնում էր» կրկին՝
Ինչպես է սերն իր մտնում անկողին...

Եվ հազար արեգակ կարծես
այրում էր սիրտը Թութմոսի:
Հազար սամում էր կարծես
մոլեգնում սրտում Թութմոսի:

II

Հաթշեփսուտ անունը ուներ
դուստրը արևի աստծո:
Մի անուն, որը ասել է
գեղեցիկներից լինել գեղեցիկ,
Չքնաղը լինել չքնաղների մեջ:

Աշխարհում ոչ մեկը նրան
չէր կարող լինել հավասար:
Աշխարհում ոչ մի հողեղեն
չէր կարող համարվել նրան հայր...
Եվ շուտով հոգին ավանդեց,
ով հայրն էր իբրև թե նրա:

* * *

Թվում էր իջած երկնքից
դուստրը արևի աստծո:
Ով էլ խոսում էր նրանից,
թվում էր՝ հեթիաթ է պատմում:
Թվում էր, թե երգ է ասում:
Դառնում էր առասպելն իրական,
և իրականն էր թվում առասպել:

Դուստրն արևի լինում է արև.
ո՞ր հողեղենը կարող է նրա
գրկի մեջ չայրվել...

Այրվեց ու այդպես մեռավ նաև նա,
ով կողակիցն էր արևի դստեր:

I I I

Եվ Եգիպտոսի գահին տիրացավ
չքնադագույնը չքնադների մեջ
դուստրն արևի:

Տիրացավ, բազմեց գահին փառավոր՝
համակած ծանր տարակուսանքով
տերությանը ողջ...

Նա ասես ծնվել էր միայն
սիրելու, սիրվելու համար:
Ծաղկունքի բույրով արբելու,
պսակներ կրելու համար:
Գահույքին նստողը պիտի
մի ուրիշ շնորհ ունենար...

Եվ այդ կասկածով հիմա
պալատն էր ամբողջ սպասումի մեջ:
Սպասումի մեջ երկիրն էր համայն,
ու սպասում էր բանակը նաև...

...Եվ լուրը գորքերում սուրաց,
Սփռեց մի այնպիսի զարմանք,
Որ նույնը կլիներ, եթե
Երկնքից իջներ մի աստված
Ու ասեր՝ ես եմ գորավար:

Եվ սպասում էր բանակը ապշած,
Որ պիտի իջնի երկնքից աստված:

Եվ իջավ աստված...

Փարավոն արև-դիցուհին
զգեստ էր հագել ռազմի:
Փարավոն տիկինը այնպե՛ս,
այնպե՛ս էր հմայիչ, կախարդիչ...

Եվ գորքը մնաց քարացած:
Քարացավ զեփյուռն էլ մի պահ:
Եվ արեգա՛կը կանգ առավ անգամ:

Եվ ոչ մի զինվոր երկար ժամանակ
Չասաց ոչ մի բառ...

* * *

Միրահար գորքին ի՞նչ ուժ կհաղթի...
Եվ եգիպտական զենքը իր համար

Թվում էր, թե վառ աչքերից լույսի
Հեղեղներ թափվում,
Իր կրծքի մեջ են հորդահոս լցվում:
Ալեկոծվում էր հոգու մեջ մի ծով,
Միրտը զարկում էր ավերին ժայռոտ...
Եվ հասկանում էր
Ինչ է իրենից կերտել պահանջվում:

Եվ հասկանում էր նաև թագուհին՝
Ինչ է Մենմուտի հոգում կատարվում:
Եվ ասում են, թե
Մերը սեր ծնեց նաև այս դեպքում...

* * *

Ողջ Եգիպտոսն էր
իր փարավոնին դարձել սիրահար:
Միրո ամեն մի լուսե զգացում
երկունք էր դառնում,
մարմին էր առնում:

Մերն իր տարերքի, արարման մեջ էր:
Մերը աշխարհում հրաշք էր ծնում:

Ժայռերը հղկվում,
Հուշարձան էին դառնում հանճարեղ:
Որքա՛ն ապառաժ
Նուրբ տեսքը առավ արևի դստեր:
Քանի՛ այան վրա, քանի՛ կոթողի
Գրվեց անունը մեծ փարավոնի:
Անապատներում քանի՛ լույս աղբյուր
Հորդեց որպես սեր...

Մերն ինչե՛ր, ինչե՛ր, ինչե՛ր չգործեց...

* * *

Տխուր էր սակայն սիրտը թագուհու:
Ինչ-որ մի թախծի շղարշ էր իջած
Լույս դեմքի վրա:

Ի՞նչ խորը վիշտ էր տանջում տիրուհուն:
Ի՞նչ հավերժական կսկիծ էր մտել
կրծքի մեջ նրա:
Միրած էա՞կ էր կորցրել արդյոք:
Դժգոհ էր բախտի՞ց, աշխարհիկ կյանքի՞ց:
Չգիտեր ոչ ոք,
Չիմացավ երբեք...

Անհաս էր նա միշտ,
Ինչպես որ աստված,
Ինչպես տիեզերք...

* * *

Անհնարին էր
Նրա նկատմամբ անտարբեր լինել,
Եվ նրան տեսնող ամեն արարած

Դառնում էր մեկեն
Սիրուց խելագար:

V

Եվ տառապում էր թութմուն էլ այդպես:

Եվ տառապանքն էր անսահման,
անվերջ:
Թվում է՝ արփին ծագում էր, որ իր
դստեր-թագուհու մասին հիշեցներ:

Նրան թվում էր՝ լույսն իր աչքերին
թագուհու չքնաղ մարմինն է տալիս:

Շիկացած արյան ամեն մի կաթիլ
ասես կաթել էր
նրա՝ շուրթերից, նրա՝ կրծքերից...

Նրան էր կրում իր մեջ ուղեղի
ամեն մի բջիջ:
Նրան էր կրում երակների մեջ
ամեն մի կաթիլ:

Եվ այլևս ի՛նչ դադար ու հանգիստ՝
հեռու նրանից, մերժված նրանից:

Չկար աշխարհում ասես ուրիշ կին:
Թութմունը միայն նրան էր տեսնում,
ով իրեն բնավ չէր էլ նկատում:
Արհամարհական հայացքն էր միայն
նրան պատասխան:

Իր սիրո համար թութմունը չկար:

...Եվ անապատի սամումն էր ոռնում
նրա կրծքի տակ:

* * *

Խիստ էր թագուհին,
Դաժան էր սաստիկ թութմուսի հանդեպ:
Անգութ էր սաստիկ,
Թեև նա հիմա զորավար էր մեծ:

Մեծն զորավար, անզոր սիրահար...

Խիստ էր թագուհին...
Նա սե՞ր էր արդյոք կորցրել մի սուրբ,
Վրե՞ժ էր լուծում այրերից այդպես.
Չգիտեր ոչ ոք:
Գուցե և ոչ ոք, թութմուսից բացի,
Չզգաց, թե որքան
Ժանտ էր թագուհին:

VI

Սիրահար սրտում
արհամարհանքի նետերը սաստիկ

V I I I

Հրաշք էր աշխարհում իրոք
դուստրը արևի աստծո:
Հրաշք, որ կին էր համարվում:
Եվ ո՞ր մի հրաշքն է ծերանում...

Ու մի օր դժնդակ մի ախտ
Դուրս ելավ դժոխքից մթար...

Ու մի օր երկնքում պայծառ
Մի սիրո աստղ էլ հանգավ:

Եվ լացեց, ողբաց Եգիպտոսն ամբողջ:
Քանի՛ արեգակ, քանի՛ սրտի մեջ
Մայր մտավ մեկեն:
Քանի՛ սրտի մեջ էլ ոչ մի արև
Չծագեց երբեք...

Եվ լացեց, ողբաց Թուրմոսն էլ դժբախտ:
Եվ լացեց երկար:

I X

Բախտախնդիր է բախտն ինքը հաճախ:
Տարօրինակ են, անսպասելի
Շրջադարձերը ճակատագրի...

Հեռացավ գահից արև-թագուհին,
Եվ բարձրացավ գահ...
Եվ բարձրացավ գահ
Ինքը՝ Թուրմոսը...

* * *

Բազմել է գահին նա տխուր, մռայլ:
Ողջ Եգիպտոսն է նրա ոտքի տակ:
Ի՛նչ չքնաղ կանայք
Չեն փարվում հիմա ծնկներին նրա:
Օրենք է ամեն մի խոսքը նրա:

Ձեռքի մի շարժով
Կարող է շարժել բազում բանակներ:
Կարող է ծնկի բերել աշխարհում
Բազում բանակներ:
Երկիրն է ամբողջ պարտավոր նրա
Կամքը կատարել,
Բայց նա գահին է տխուր և մռայլ:

Գահին բազմած է նա տխուր, մռայլ,
սակայն թագուհու մահը չէ բնավ
պատճառը դրա...

X

Նեղոսի ափին
Կանգնած է անմահ տաճարը սիրո՝
Որպես քարե ձոն,

Որպես հանճարեղ երկունքով կերտած
Հսկա երգեհոն:

Նայում է նրան թութմոսը հաճախ,
Հիշում է անցած տարիները ժանտ...

Որքա՛ն է սիրտը արտասովել այստեղ:
Որքա՛ն է այստեղ թախծել միայնակ:
Նայել է երկինք,
Երազել,
Խնդրել...

Այստեղ ամեն քար դարձել է նրա
Տանջանքի վկան:

Լողում է, ահա,
Նեղոսում դարձյալ սիրահար մի գույգ...
Ո՛վ էրջանկություն՝ տրված ի վերուստ...

Նայում է նրանց թութմոսը մռայլ,
Եվ, ի՞նչ, նախա՞նձն է սրտի մեջ վառվում...
Ա՛խ, ա՛խ, Երկնավոր,
Ո՛վ է իր բախտի համար մեղավոր:

Ով պիտի իրեն լույս տար սեր-սրտով,
Վերքերին պիտի կաթեցներ արև,
Իր արևները նա մարեց հավետ,
Իր սրտի վերջին շողերը առավ,
Մարմինը նետեց մի ժանտ անապատ:

Եվ անապատի սև կարիճները հիմա բուրբել,
Ամեն մի քայլի խայթում են նրան:
Ու խառնվում է թույնը արյան հետ:
Կարծես կարիճներն իրենք են մտնում
Նրա մարմնի մեջ:
Միրտը ճանկերի ոստայնն են գցում
Ու խայթում, խայթում...

Ատելության սև թույնն է անդադար
Թութմոսին այրում:
Ատում է, բայց ո՞ւմ...

* * *

Ատում է, ատում նա սերը հիմա:
Թվում է նրան նա մի դև, վիշապ,
Որն առավ հավերժ ն՛ խինդ, ն՛ ծիծաղ:
Առավ իրենից ամեն արշալույս:
Իր կյանքի ոսկե տարիներն առավ:

* * *

Քինախնդիր են սրտերը ատող.
Զգո՛ւյշ նրանցից...
Սրտերը ատող վրեժ են ծնում.
Զգո՛ւյշ վրեժից...

* * *

Թույնը այրում էր Թութմոսին արդեն,
Եվ մարում էին
Վերջին աստղերը սրտի մեջ մեկ-մեկ:

Նրա սերը լույս...
Ինչ անապատ որ ընկներ մի կաթիլ,
Աղբյուր կհորդեր:
Ինչ քարի կաթեր,
Ծաղիկ կբուսներ:
Կուրացած աչքին լույս կպարզներ:

Նրա սերը լույս...
Անտակ օվկիանոս, անծայր մի անտառ:

Եվ չորանում էր հիմա անտառը
Դանդաղ, ճյուղ առ ճյուղ:
Եվ ցասումն էր գոռ՝ ծովի պես շաչում՝
Չգտնելով հուն:

* * *

Եվ ժամանակն էր դևի պես սահում:
Դևի պես ծանր ու սարսափազդու...

Նայում էր հենց որ Թութմոսը գահին,
Հիշում էր նրան:

Բազմած է, ահա, նա գահի վրա,
Առջևը խոնարհ կանգնած է ինքը:
Ինքը՝ սիրահար, ինքը՝ սիրագար,
Ինքը՝ մի թշվառ...

Անտարբեր, սառը հայացքով
նայում է թագուհին իրեն:
Վերևից նայում է իրեն...
Նայում է... չի նայում կարծես...

Այդ նույն վերևում նույն ինքն է հիմա...

* * *

Ա՛խ, ինքն ինչպե՛ս, ինչպե՛ս կուզեր՝
թագուհին ողջ հիմա լիներ:
Ինքն էլ լիներ որ տիրակալ,
նա էլ լիներ որ տիրակալ,
տերության դեմ նրա գոռոզ
պատերազմի ելներ դիմով:
Ողջ զայրույթը անգորության
մեկեն պարպեր մոլեգնությամբ:
Ակունք գտներ ցասումը իր՝
ողջ երկիրը մատներ հրի:
Կուրծքը պահած կրակներին՝
հովացներ, հազեցներ:

Եվ թագուհուն գերի առներ,
գերի առներ...

* * *

Քինախնդիր է սիրտը վիրավոր.
Զգո՛ւյշ նրանից...
Սիրտը վիրավոր վրեժ է ծնում.
Զգո՛ւյշ վրեժից...

X I

Վրեժի այրող կրքից մոլեգնած՝
չի ներում թուփոս փարավոնը էլ
ոչ մեկին հիմա:

Շուրթերն ինչպես էլ փորձում է շարժել,
բղավում է՝ մա՛հ...

Չարադատ արյան ամեն մի կաթիլ
դարձել է արդեն
մեծ ատելության փոքրիկ մի մասնիկ:
Այրվում է արդեն ուղեղի ամեն,
ամեն մի բջիջ:

Լցված ահարկու թույնով վրեժի՝
չունի այլևս դադար ու հանգիստ:
Եվ այլևս ի՛նչ դադար ու հանգիստ,
երբ ամեն երակ,
ամեն զարկերակ դարձել է մի իժ,
գոռում է՝ վրեժ:

Լոկ ատելության մրրիկն է հիմա
ոռնում սրտի մեջ:
Ատելությունն է իր տարերքի մեջ:

X I I

Թուփոսը գահին
բազմել է, ինչպես ահարկու մի դև:
Աչքերի խորքից նայում են ինչ-որ
կարմիր վիշապներ:

Մի պահ այնպես է թվում տեսնողին,
թե ձեռքերի տեղ օձեր են դեղին:
Ինչ-որ մի օձ էլ
մտել է կարծես երախը նրա,
ուր որ է պիտի կարմիր թույն թքի:

Սրտի տեղ նրա նստել մի հրեշ,
Գոռում է՝ վրեժ...

* * *

Եվ լսողներին թվաց, թե իրենք
ճիշտ չլսեցին:
Մի պահ կարծեցին, թե փարավոնը
խելագարվել է:
Մնացին մի պահ տեղում քարացած,
բայց հրամանը քիչ հետո պայթեց

առավել ուժեղ.

- Քանդե՛լ...

Եվ ո՛չ մի արձան չթողնել:
Ջնջե՛լ աշխարհից անունը նրա:
Նրանից հետք իսկ պիտի չմնա:

Եվ փարավոնի կամքն աստվածների
կամքն էր ահարկու:
Ու խոլ մի խորշակ Ֆշշաց ու ոռնաց.
քանդեց ու փշրեց,
ջարդեց, ավերեց...

Ատելությունն էր արդեն աշխարհում
իր տարերքի մեջ:

Միրո անտառի տեղում հիմա չոր անապատ էր լոկ,
ուր ատելության մրրիկն էր միայն ոռնում գարշելի:

* * *

Թագուհուց հետք իսկ պիտի չմնար...
Եվ մուրճը այն նույն,
որը ժայռերից արվեստ էր կերտում,
արարում հրաշք,
ջնջում էր հիմա վսեմ մի անուն,
քանդում մի աշխարհ,
աշխարհից քերում մի դարաշրջան:

Թագուհուց հետք իսկ պիտի չմնար...
Եվ սպանեցին
մինչև իսկ նրա հարազատներին,
մերձավորներին,
որ երբևիցե
չծաղկի հանկարծ արյունը լուսե:

Եվ սպանեցին (ո՛վ ատելություն)
Մենմուտի կնոջն ու զավակներին,
որ նրա սիրո լույսն էլ չվառվի:

Եվ ոչնչացվեց, քանդվեց ամեն ինչ,
ու միայն չքնաղ տաճարը սիրո
մի ինչ-որ հրաշք փրկեց հրաշքով...

X I I I

Եվ հանգստացավ փարավոնը ժանտ՝
Մրտի մեջ անհուն մի վրեժ մարած:
Կործանած լուսե մի գեղեցկություն,
Մի շքեղ հեքիաթ:

Եվ հանգստացավ հոգին դիվահար,
Միրտը ոխակալ:

Հանգստացավ նա,
Շրջում է սակայն կրկին մթագնած:
Շրջում է հաճախ Նեղոսի ափին,

Շրջում սրահում շքեղ տաճարի,
Քայլում է, խորհում,
Քայլում է, խորհում,
Եվ կարծես ինքն էլ դեռ չի հասկանում՝
Աչքերի խորքում
Հին ցա՞վն է մխում,
Կսկի՞ ծ կա մի նոր,
Թե՞ անհուն զղջում...